ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀՌՑ-ԲՄԾՁԲ-21/03 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգով հանրապետական սփռման մուլտիպլեքսի արբանյակային տարածման համար արբանյակային ունակության վարձակալության ծառայության ձեռքբերման գնահատող հանձնաժողովի բացման և գնահատման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 17.02.2021թ. ժամը 10.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/ Մ. Դավթյանը

Անդամներ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Ռ. Աֆանդյանը
Ս. Քոչարյանը
Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/՝ Ա. Մովսիսյանը

Հանձնաժողովի քարտուղար՝
Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ Մ. Նիկոլյանը
Բացակայում է՝ Լ. Դալուզյանը

1. Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

Ընդունել ի գիտություն, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության կարիքների համար հանրապետական սփռման մուլտիպլեքսի արբանյակային տարածման համար արբանյակային ունակության վարձակալության ծառայության /Ծառայություն/ ձեռքբերման նպատակով ս.թ. փետրվարի 01-ին էլեկտրոնային ARMEPS համակարգով հայտարարվել է ՀՀՌՑ-ԲՄԾՁԲ-21/03 ծածկագրով բաց մրցույթ: Հայտերը բացվել են էլեկտրոնային www.armeps.am կայքի միջոցով, ս.թ. փետրվարի 16-ին, ժամը 23.00-ին:

Հանձնաժողովը արձանագրեց.

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները, տվյալները

N	Մասնակցի անվանումը	գործունեության հասցեն էլ. փոստի հասցեն	հեռախոսահամար	ՀՎՀՀ
1	Eutelsat S.A.	32 Boulevard Gallieni, 92130, ISSY LES MOULINEAUX, France kbadalov@eutelsat.com	+33 6 74 88 06 80	FR 19422551176

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 ՀՀՌՑ-ԲՄԾՁԲ-21/03 ծածկագրով Ծառայության մատուցման բաց մրցույթին ներկայացվել է մեկ հայտ՝ Eutelsat S.A. ընկերության կողմից, որում առկա են Հավելված 1՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությունը, Հավելված 2՝ Գնային առաջարկը:

3.2 Փաստաթղթերում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

- ✓ Բաց մրցույթին մասնակցելու Հավելված 1-ի 2-րդ կետը լրացված չէ մասնակցի կողմից՝ մասնավորապես, մասնակցի անվանումները և աղյուսակով պահանջվող իրական շահառուների տվյալները.
- ✓ Բացակայում է Հրավերի 4.3 կետով պահանջվող հայտի ապահովումը՝ կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով:
- ✓ Բացակայում է մասնակցի կողմից առաջարկվող պայմանագրի նախագիծը /ներկայացված փաստաթղթերը կցվում են/:

4. Մասնակիցների առաջարկած գները ըստ չափաբաժնի

ԱՄՆ դոլար

N	Մասնակցի անվանումը	1 չափաբաժին		
		Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գումար
1	Eutelsat S.A.	1 083 000	-	1 083 000

Գինը ներկայացված է արժույթով և հաշվարկվել է Հայաստանի Հանրապետության դրամով՝ հայտերի բացման նիստի 16.02.2021թ.-ի դրությամբ, ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով /կցվում է/: 1$ = 524.92 ՀՀ դրամ:

5. Հանձնաժողովը որոշեց

5.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 41-րդ կետով՝ նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և Eutelsat S.A. ընկերությունից պահանջել էլեկտրոնային փոստով ներկայացնել շտկված փաստաթղթերը մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը 18.02.2021 ժամը 15:30 Երևանի ժամանակով:

- ✓ Շտկել Հավելված 1-ով սահմանված անհամապատասխանությունները
- ✓ Ներկայացնել հայտի ապահովումը

Քանի, որ հայտի ապահովումը էլեկտրոնային եղանակով /armeps-ով/ չի ներկայացվել բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը, ապա մասնակիցը գնահատող հանձնաժողովին պետք է ներկայացնի բանկային երաշխիքի բնօրինակը, կամ հայտի ապահովումը պետք է ներկայացնի կանխիկ փողի ձևով, **մինչև 17.02.2021 Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:**

Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին, որը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ հրավեր 7.3 կետով սահմանված դեպքերի:

- ✓ Ներկայացնել պայմանագրի նախագիծը

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

5.2 Բացառությամբ պայմանագրի ներկայացման նախագծի պահանջի՝ եթե սահմանված ժամկետում արձանագրված մյուս անհամապատասխանությունները շտկվեն, ապա հայտը կգնահատվի բավարար: Հակառակ դեպքում հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Նիստը շարունակվել է 18.02.2021 ժամը 16.00-ին

6. Հանձնաժողովը արձանագրեց,

Eutelsat S.A. ընկերությունը Կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետներում չի ներկայացրել հայտի ապահովման բնօրինակը, ինչպես նաև չի շտկել սույն արձանագրության 3.2 կետում նշված Հավելված 1-ում արձանագրված անհամապատասխանությունները:

7. Հանձնաժողովը որոշեց

7.1 Eutelsat S.A. ընկերության հայտը գնահատել անբավարար և մերժել՝ ղեկավարվելով Կարգի 42-րդ կետով

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

7.2 Հաստատել չկայացած ընթացակարգի մասին հայտարարության տեքստերը հայերեն և ռուսերեն լեզուներով /կցվում է/

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Դավթյան

անդամներ՝ Ռ. Աֆանդյան

Ս. Քոչարյան

Ա. Մովսիսյան

քարտուղար՝ Մ. Նիկոլյան